2774

262.1
4-77

1907

3-27380
Ա.Ա.Ա.

ՀԱՄ.
3-27380
262.1
4-77

ՊԱՏՃԷՆ

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ *Արժանապատիւ անդամոց Միութեան քահանայից եկեղեցեաց Հայոց շրջանին Կոտայից գործակալութեան, հարազատ որդւոց Մայր Աթոռոյս նուիրեմք աղջոյն և Հայրապետական օրհնութիւն։*

Ընկալաք զԿանոնագրութիւն Միութեանդ, և հաստատ եղեալ բովանդակութեան ողջոյն յօդուածոց նորին, բարւոք համարեցաք զձեռնարկութիւն քահանայական Միութեանդ։ Մխիթարութիւն է Մեզ տեսանել, զի կանխագուշակ հեռատեսութեամբ, բազում ջանիւք տքնեն սպասաւորք Եկեղեցւոյ մերոյ ըստ հանգամանաց ժամանակիս՝ գործել միաբան սրտիւ և խորհրդեամբ անթերի հովուել զհօտ իւրեանց և լրիւ կատարել զպարտիսն, զորս յանձն առեալ է նոցա ի կոչման իւրեանց։ Ակն ունիմք, զի այսու եղանակաւ ունիք օր քան զօր ծաղկեցուցանել զմտաւորական և զմտաւորական կացութիւն Ձեր՝ յօգուտ բարոյական զարգացման հօտիցդ ի Ձեզ հաւատացելոց

ԱՌ
ИНВ. № 21089

և յաջողութիւն նիւթական միջոցայ համերաշխ Միութեանդ։

Արդ այսու Հայրապետական Կոնդակաւս հաստատեալ Մեր զԿանոնադրութիւն Միութեանդ, հայցեմք յԱմենակալ Տեառնէ, շնորհել անդամոցդ Միութեան յարատև ուղղամիտ գործունէութիւն, յաջողութիւն և անկեղծ սէր եղբայրական ի կատարածել զօգտաւէտ բաղձանս Ձեր։

Ողջ լիջիք և պահպանեալ ի խնամս Ամենազօր Փրկչին մերոյ և օրհնեալ ի Մէնջ։ Ամէն։

Ի վերայ իսկականին ստորագրեալ է՝

ՄԵՐԾԻՉ Կաթուղիկոս Ամենայն Հայոց

Ի 4-ն Յուլիսի 1907 ամի
և ըստ տոմարիս ՌՃԾԶ
ի Հայրապետութեան Մերում ԺԴ. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ
Թ. 1134.

44946-ա.ա.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-ի ԳԱ. ՍՍՀ
Գ. Մ. Ա. Մասեր
ՍԱՄԱՐԿԱՆԴ

29489-63

Երկար մտածմունքներից ցանկալի էր համարում եղբայրական-երիցական համախմբման կարծիքների փոխանակութեամբ մտքերի ամփոփումն, յարաբերութիւնների որոշ հիմքերի վերայ դրուելն Կոտէից գաւառի հայ քահանաներիս մէջ. որոշ պայմանները յարաբերութեան իւրաքանչիւրի իրաւանց հաւասարակշռութեան սահմանները, դրութեանց բարւոքումն. ծիսակատարութեան ձեռնարկի միակերպութիւնը ամեն եկեղեցում, տնտեսական գոյութեան համար որոշ սահմանումները. ժողովրդի հետ՝ յարաբերութեան վարմունքի իրաւանց չափը, տուրքերի բաշխման որոշումները, տեղական սովորութեան կարգ դառած կանոնները, իւր եղբայրական քահանայական պարտաւորութեան պատահական ժամանակաւոր կատարման մէջ վարձատրութիւնը. և այն հանգամանքների բարդութիւնից յառաջացած դժգոհութեանց բաւարարումն խաղաղարար միջոցաւ. ժողովրդի բարոյական բարձրութեան մտաւոր մակերեսյթի զարգացման համար գրասիրութիւն տարածելն.կրթութեան մասին մտախոհ հոգալն միջոցների ձեռնարկութեամբ և օգնելն. հոգեոր իշխանութեան բարոյական հեղանակութեան բարձրացման մէջ՝ էական պարտաւորութիւնը. ընկերական ինայողական դրամարկղի հաստատուն հիմքերի, և սկզբունքների վերայ դնելն. և որն արդարացի պահանջներն էին 8.ին սեպտեմ. 1905 թ. տան և եօթ քահանայից ստորագրութեամբ տրած խընդիրը Հայոց Երևանայ Կոնսիստորիային՝ խորհրդածութիւնները քահանայից բարեհաճեց օրինական ճանաչել. և քահանայական ժողովը պաշտօնապէս ժամանակի գործակալութեան միջոցաւ հաստատեց հետևեալ գրութեամբ. որ է այս. «Պաշտ. Գործակալին Կոտ. արժ. Յակոբոս քահանայի. ի վերայ յայտարարութեան իմոյ № 120 բարձրագատիւ փոխ. Թեմական Տ. Կարապետ վարդապետն մակագրեալ է զհետագայն». Հաճ հաւան գտեալ ընդ խորհուրդ գումարելոյ երբեմնակի ժողով քահանայից վիճակին Կոտայից առ ի խորհրդածելոյ զեղանակաց բարւոքման կացութեանց իւրեանց յանձն առնեմք Տ. Լևոն վրդպի. ընդ ներելոյ հանգամանաց նախագահել երբեմն ժողովոյն և ջանալով ի բարի նպատակն ուղղել զխորհրդածութիւն նորա զեկուցանել մեզ զընթացից և զարդեանց։

Գործակալ Լեւոն վարդապետ.

Ընդ իսկականին ուղիղ է՝ Պաշտ. Գործակալ Յակոբոս քհնյ.

Ի 20ն Սեպ. 1905 թ.
Երևան.

Արժանապատիւ եղբայր մեր ի Քրիստոս
Գեորգ քհնյ. Ախոյեանց.

Պատուակից Տէր. Մենք Կոտէից շրջանի գործակալութեան ենթարկուող քահանաներս Ձեր հեռատեսութեան շնորհիւ համախմբուելով ի մի, կազմեցինք Ընկերական-երիցական Միութիւն. ի նկատի առնելով մեր տնտեսականի բարելաւումն և բարոյականի բարձրութիւնը. հասու լինելով Ձեր ուշիմ խոհականութեան՝ պէտք էր և մեզ կանոնադրութիւն որով անշեղ առաջնորդուէինք. միացեալ բարոյական և նիւթական ուժով սահման դնելով մեր ապագայ գործունէութեան. այս առթիւ դիմում ենք Ձեզ, որպէս դիտակից խելահասի՝ կազմել ծրագիր. լիայոյս լինելով և, ընդունակութիւն ունիք ծննդական մտաւորութեամբ. չենք երկբայում մեր խնդրի իրագործմանը, մեր պարտաւորութիւնների և իրաւունքների որոշիչ մանրամասն կանոնները կազմած տեսնել Ձեր խոհուն հասու իմացականութեամբ. վստահ լինելով՝ մերժման չենք արժանանայ և որի մասին ստորագրում ենք քո հաւասարապատիւ եղբայրներդ։

Ստորագրութիւնք քահանայից.

Նորին Վեհափառութեան
Ամենապատիւ Ծայրագոյն Պատրիարքի Աստուածարեալ Հայրապետի եւ գերագահ Կաթուղիկոսի ամենայն Հայոց Տ. Տ. Մկրտչի Ա.

Կոտէից Գործակալութեան շրջանի Քահանայական Միութեան անդամներից

Խոնարհաբար խնդիր.

Աստուածարեալ Քահանայապետ. Ժամանակի պահանջները ամեն դասակարգի անձնաւորութեանց զգալ է տալիս իւր գոյութեան պայմանների բարելաւման համար մտախոհ լինել. ընդլայնել կենսական միջոցները, կուլ չգնալու ժամանակի բուռն դառնաղէտ ալիքներին. իրականութիւնը միութիւն է պահանջում կեանքի կռուի ասպարիզում չընկճուելու եթէ ոչ յաղթող, գոնէ իւր գոյութիւնը քարշ տալով մտածում է և իւրայնոց մասին հոգալ. նա մանաւանդ գաւառական քահանաներիս համար, որոց կեցութեան հասու լինելու համար ժամանակներ են պէտք և դարման. . . . Օգտուելով Ձերդ Վեհափառութեան տրուած հաւասարակշիռ իրաւունքներից ի 20 Սեպտ. 1905 թ. համարաւ 125 թոյլատրուից Երևանայ Փոխանորդից. և այդ օրէն կազմած ունենք Միութիւն և խորհում ենք մեր կեանքի առօրեայ ընթացքի եղելութիւններին։ Սակայն Տէր մեր և տնօրէն, հազիւ մեր տկար մտքերի արտադրուած կանոնները համարձակում ենք սփռել Ձերդ Վեհափառութեան լայնախորհուրդ լոյսաթոյր աչաց առջև. լիայոյս լինելով և շնորհ կունենանք Քահանայապետիդ օրհնութիւնն և հաստատութիւնն ստանալ ի խրախոյս մեր գիւղական քահանաների ապագայ գործունէութեան նպատակին, որի մասին և սպասում ենք։ Քո խոնարհ որդիք։

Ստորագրութիւնք քահանայից.

1907 թ. 5-ին Մայիսի
Պաղնի գիւղ. Կոտ. Գ.

Ս.

Կանոնադրութիւն Կոստիցց զաւառի հայ քահանաների միութեան:

1 Միութեան գործունէութեան եղանակը, նպատակների իրագործման.

ա. Յարաբերութիւնների որոշ հիմքերի վերայ դրելիւն ժողովի կարծիքների ամփոփումով.

բ. Վերաբերութեան պայմանների որոշումն.

գ. Իւրաքանչիւրի իրաւունքների սահմանների հաստատակղութիւնը.

դ. Դրութեան բարւոքման հաստատուն հիմունքների վերայ դնելն.

ե. Տնտեսական գոյութեան որոշ աստիճանի սահմանումն.

զ. Իրաւախոհութեան չափը ժողովրդի հետ ունեցած յարաբերութիւնների.

է. Պարբերաբար տուրքերի բաշխման գոյութիւնը տեղական սովորութիւնների համաձայն. և կամ աւանդաբար որոշ կարգ-քանոն դառած կանոններին զտումն և մաքրումն.

ը. Ընկերական պարտաւորութիւնների կատարման որոշ քանակութեամբ վարձատրութիւն.

թ. Հանգամանքներից առաջ եկած բարդութիւնների, թիւրիմացութիւնների, ծագած դժգոհութիւնների ժողովրդից առ քահանայն՝ խոհականութեամբ բաւարարութիւն տալն.

ժ. Ցանձնաժողով կարգել անարդար յարուցած վէճերին երկկողմից միջնորդ կամ պատուոյ դատարանով վերջաւորելու.

ժա. Քահանաների մտաւոր զարգացման համար հոգալ, նպաստել բարոյական բարձրացմանը.

ժբ. Ժողովրդի մէջ հնարաւորութեան չափով ընթերցանութիւն տարածելն ու օգնելն.

ժգ. Հոգևոր իշխանութիւնների բարոյական բարձրութեան բարեացակամ հանդիսանալն օրինականապէս.

ժդ. Միակերպութիւն եկեղեցական արարողութիւնների շրջանիս բոլոր եկեղեցիներում.

ժե. Կազմել խնայողական դրամարկղ որոշակի կանոններով.

ժզ. Օգնել դրամական նպաստով զառամեալ քահանային իրեն հասանելի տուրքերից կամ որոշ միջոցների սահմանումներ . . . .

Բ.

Որոշած նպատակների իրական միջոցները.

2 Քահանայական Միութեան ունենալ գրադարան որոշուած գիւղում, որը շրջապատուած է մերձաւոր գիւղական համայնքներով նայած յարմարութեան, թէ գիւղական քահանաների մը-տաւոր խոհականը լուսաւորելու՝ և թէ ժողովրդեան լայն խաւերում գրասիրութիւն տարածելու. կարևոր դէպքերում հրաւիրել ձեռնհաս գիտակ անձնաւորութիւններ դասախօսելու նոյնը և խելահաս քահանաներ. որոշելով և գրքերի որակը։

3 Քննիչն. Միութեան նիւթական աղբիւրներն են՝

ա. Անդամավճարները.

բ. Դումարներից գոյացած եկամտի տոկոսներ.

գ. Կամաւոր նուէրներ քահանաների օրինակատարութիւնների ժամանակ.

դ. Նուիրաւութիւններ.

ե. Քահանաների տարեդարձի, անուանակոչութեան ստացուած տուրքը.

զ. Քահանաների տներում եղած օրինակատարութիւնները, մկրտութիւն, պսակ, թաղումն, տնօրհնէք, գերեզմանօրհնէք և այլն.

է. Զատկական մատաղների մորթիները—կաշիները.

ը. Քահանայից տարեկան քսան և հնգական լիտր տուած ցորենը շտեմարանի համար.

4 Միութեան գանձարանում թողնում է առ ձեռն պատրաստի դրամ երեք հարիւր մանէթ գիւղական քահանաների կարևոր պահանջներին բաւարարութիւն տալու համար. իսկ յաւելացած դրամները, տոկոսները պայմանաւորուած սահմանումներով մնում է Վարչութեան իրաւասութեան ներքոյ և նրանց գործելակերպի որոշմունքներին ընդ պատասխանատուութեան ժողովի։

5 Ներքին կանոններով սահմանուած՝ դրամները փոխ տրւում է Միութեան անդամներին որոշուած քանակով այն է 20—30 մնթ. մի և կամ երկու ամիս ժամանակամիջոցի. մանէթին մէկ կոպ. տոկոսով և այն՝ փոխադարձ երաշխաւորութեամբ իր երկու ընկերների և նախագահի հաստատումով։

Գ.

Անդամների պարտաւորութիւնները, իրաւունքները, Միութեան գոյութիւնը պահպանելն եւ կազմը.

6 Քահանայական Միութեան անդամներ կարող են լինել Կոտէից գաւառի այն քահանաները, որոնք ունին հաստատուն ծխականներ որոշ համայնքներում՝ և պաշտօնավարում են. նաև արտօնւում է շրջանից դրսի քահանաներին միանալը, երբ լիակատար կվճարեն 3. և 7. յօդուածների պարունակութիւնը։

7 Իւրաքանչիւր անդամ Միութեան գանձարանին տալիս է մի ռուբլի քսան կոպ. նոյնպէս և 3. յօդ. ա—ը աղբիւրները։

8 Միութեան յարող քահանաները խնդրագրով դիմելու են նախագահին և ժողովի համաձայնութեամբ անդամ համարւում են, երբ՝ 1, 2, 3 և 7. յօդ. պարտականութիւնը կատարելու գործ և ցանկութիւն յայտնեն.

9 Ամսավճարներ, տոկոսներ, օրինակատարութիւններից ստացուած եկամուտներ, նուէրներ և այլ կողմնակի մուտքեր գանձւում է Վարչութեան գանձապահի մօտ. ժողովի և նախագահի գիտութեամբ և որոշմամբ։

10 Միութեան անդամները չմասնակցող. Միութեան դրամարկղին չյարող քահանաների վերայ բընութիւն, ճնշումներ գործ դնելու իրաւունք չունենալ. թեր և դէմ կարծիք սփռող քահանաներին զգուշութիւն հրաւիրել, չլսելու դէպքում, խոպառ կտրել յարաբերութիւնները իբրև բարոյական պատիժ։

11 Միութեան գանձապահ անձնաւորութիւնը, իրաւունք չունի ստանձնած ընկերական դրամը առանց ժողովի գիտութեան ի հաճոյս յանձնելու որ և է անդամին գործադրելու. եթէ գործադրել է հրքան և երբ՝ մանէթին մէկ կոպ. վճարելու է ամսական. բացառութիւն երբ ժողովի որոշմունքով կարևոր դէպքերի համար առձեռն պատրաստի դրամ թողնուած է։

12 Պատուաւոր անդամի կոչումն ստանում է նա՝ երբ իւր գործունէութիւնով ու ջանքերով Միութեան համար արդիւնաւոր ծառայութիւններ արած կլինի. և դրամարկղի միջոցներին լայն ծաւալ օգտաւէտութիւն կունենայ։

13 Իւրաքանչիւր համայնքի օրինաւոր քահանայ ճանաչւում է նա երբ ձեռնադրուած է ի հովուութիւն տեղական գիւղական ժողովրդականաց, և կամ բարձրագոյն իշխանութիւնից պաշտօնապէս հրաւիրուած հաստատուածը։

14 Համայնքի ծխատէր քահանայի բացակայութեան դէպքում, մերձաւոր հրաւիրուած քահանան կատարելու է ընկերական պարտաւորութիւնները, ստացուած վարձատրութիւնը հասցնելու է ծխական քահանային. յօդ. 1. բ—ը։

15 Գիւղական քահանան տանը եղած ժամանակ, մօտաւոր քահանան յաւակնութիւն չունենայ իրաւունքների սահմանումները ոտնահարելու, կորսնցնելու հաւասարակշռութիւնը, կրքերի ու դժգոհութիւնների պատճառ դառնալ ու կատարել օրէնքներ իւր խնամէութեան սիրաշահութեան սին պատուոյ համար. այնպիսիների հետ Վարչութիւնը վարուելու է. համաձայն 17, 18, 38, 40, 42. ինչպէս խախտող 1. յօդ. ա—ը. հիմունքները և կենթարկուի 23. յօդ։

16 Միութեան անդամների վերայ հոգևոր հիմնարկութիւններին ժողովրդից տրուած բողոք-խնդրագիրը՝ վերադարձնել քահանայից ժողովի նախագահին՝ վերապահութեամբ, եղած կամ պատահած դէպքերի իսկութիւնը պատուոյ և կամ միջնորդ դատարանով վերջաւորելու և տեղեկագրելու, բացի քրէական դիպուածներից։

17 Զանցառու, վարմունքներից զուրկ պակասութիւն ունեցող անդամներին, սահմանուած կանոնների իրագործումն. յանդիմանութիւն, զգուշութիւն հրաւիրելն, տուգանքի ենթարկելն, բարոյական պատժի արժանի համարելն Վարչութեան գործադիր մարմնի իրաւասութիւնն է համաձայն 40, 42 յօդ։

18 Վարկ ու համարում ոտնահարող, արբեցողութիւնով պարապող, կախարդութեան հետևող, քահանայ անուան արատ բերող Միութեան

անդամին՝ տուգանքի ենթարկել և ժամանակաւոր հեռացնել իրաւունքների սահմանափակումով. հմտ. 5, 17, 40, 42 և 25. յօդ։

19 Հոգևոր իշխանութիւնները, հեռատեսութեամբ և սրատեսութեամբ մտնելու են քահանաների ներկայ ու ապագայ դրութիւնների վերաբերութիւնների մէջ, թէ որպիսի բաւարար միջոցներով անուամ և անուցանում են իրենց անդամաշատ գերդաստանը, և թէ ժողովրդից առաջարկուած քահանայացուների ընդունելութեան խնդրագիրը վերապահութեամբ վերադարձնել քահանայական ժողովի հայեցողութեան քննութեանը, ներկաներին առանց կարեորութեան չզոհել, ենթարկուիլ կուսակցութիւնների, խնամէութիւնների և կամակորութիւնների և ապրուստների դառն միջոցներ ստեղծել։

20 Քահանայագործելու անընդունակ եկեղեցւոյ բաղմամեայ պաշտօնեային, որոշ քանակութեամբ կազմել ապրուստ ծխականների եկեղեցւոյ դրամներից՝ ծուխ հովուող քահանայից ի նկատի առնելով ժողովրդի դրութիւնը տուրքերի և հասանելիքների վերաբերմամբ.

21 Հոգևոր իշխանութեան ներկայացուցիչ պաշտօնեայն-գործակալը լինի ընտրուած անձնաւորութիւն, և ոչ նշանակուած. սահմանումներ լինին հասանելիքներին որակի և քանակի վերաբերեալ. հաստատուն առնչութիւն, խղճմտաւոր պարտաճանաչութիւն և ստիպմունքների վերացումն։

22 Միութեան մասնակցող անդամները իրենց առօրեայ զրկանքներով կազմում են վերոյիշուած դրամարկղը. տեղութեան ժամանակամիջոցը որոշելով տասնեւհինգ տարի. դրամների յաւելացած դէպքում, արքունական, վաճառական և կամ հասարակական դրամապահեստների ի չահեցողութիւն յանձնելն, արժէթղթերի խաղարկութեան տոմսերի գնելու, բարենպաստ նպատակների գործադրութեան իրաւունքը՝ միմիայն քահանայական ժողովի ընդհանուր միութեան որոշումն է. յօդ. 4.

23 Պայմանաւորուած ժամանակամիջոցից առաջ դուրս եկող անդամն, զրկւում է իր միութեան դրամարկղին տուած հասանելիքների բաժնից, հասոյթները մնում են յօգուտ Կոտէից գաւառի անդամակցող քահանաների գանձարանին. նա և՛ զրկւում է բողոք-վէճ յարուցանելու իրաւունքներից ընդդէմ Քահանայական Միութեան. յօդ. 3, 5, 6, 7, 22. միջոցների սղութեան պատճառները յայտնել նախագահին խնդրագրով։

24 Միութեան անդամակցող քահանայի մահանալիս՝ իր յաւելեալ դրամաբաժինը ստացուած հասոնելի տոկոսով յանձնուելու է քահանայի այրուդն և կամ հասակաւոր որբերին. իսկ եթէ թողնեն Միութեան տրամադրութեան տակ, ստանալու են քանակի տարելից տոկոսը, բացի 3. յօդ. բ, գ, դ. ե, զ. է, ը. որոշմունքներից։

25 Փոխ դրամ վեր առնելու միմիայն արտօնուած է Միութեան անդամներին, կողմնակի անձնաւորութիւնները զրկուած են այդ իրաւունքներից. յօդ. 5.

26 Անդամակցող քահանայի մահուան ծախսերը հոգում է Միութիւնը իր յաւելեալ դրամի քանակով. եթէ չունի ժառանգներ՝ մնացեալն մնում է յօգուտ քահանայական գանձարանին։

27 Միութեան անդամների հիւանդութեան, ցաւագարութեան դէպքերում նրանց բուժելու ծախսը հոգում է իր սեփական միջոցներից քահանայական կազմը, առողջութիւնը վե-

բականգնած դէպքում՝ ծախսուած դրամները տոկոսիքով վերադարձնելու աղագաւ։

28 Փոխ դրամ վերառնող չհատուցանող անդամին, հանուր ժողովի մէջ յանդիմանութիւն կարդալուց յետոյ՝ արձանագրել նրա դիտաւորեալ կեղծութիւնը, զրկելով նրան՝ 23, 25, 17, 7 և 3, յօդ. համաձայն. և կենդանի մեռած համարել, ծանուցանելով Միութեան շրջանի ժողովրդոց։

Դ.

Ընդհանուր ժողով.

29 Քահանայական Միութեան ընդհանուր ժողովը լինելու է տասնեւերկու անգամ բոլոր անդամակցողների ներկայութեամբ։

30 Ժողովից բացակայ գտնուող անդամն՝ առանց օրինաւոր պատճառների և գրաւոր ցուցմունքների, ենթարկւում է ա. անդամին՝ մէկ, բ. անդամին երկու ռուբլի տուգանքի. գ. անդամին իրաւունքների զրկումների. ներւում է յարգելի և անկարող հիւանդութեան պատճառները։

31 Անյետաձգելի հարցերի, խնդիրների կարևոր պահանջ զգացած յարուցած պատահելի վէճերի առթիւ՝ արտակարգ ժողով կարող է լինել նախագահի և կամ վերատուգող մասնաժողովի պահանջով։

32 Դրական խորհրդածութիւնները, նախագահի կողմից նախօրօք ծանուցուելու է ընդհանուր ժողովի անդամներին օգնականի ձեռամբ՝ ոչ պակաս տասն օրից. և այն՝ գրաւոր. որպէս զի խորհրդի դիտումները, որոշմունքները, կարծիքների ամփոփութիւնը լինի կանոնաւոր. յօդ. 1.

33 Միութեան անդամակցող քահանաները՝ ձայնի հաւասար իրաւունք ունին ժողովի ժամանակում, ձայների հաւասարութեան նժարին՝ առաւելութիւնը տրւում է նախագահին որ կողմի հետ միանում է։

34 Քահանայական ժողովի անդամի բացակութեան դէպքում յօդ. 30. չէ ընդունւում ժողովի կողմից գրաւոր կամ բանաւոր ձայնի իրաւունք յանձնարարելուն իւր ընկեր անդամներից որ և է մէկին։

35 Նախագահի սահմանումով և ժողովի որոշումով կարգադրւում է ի մի հաւաքուելուն օրը. ամսի քանիսին, ում մօտ. և այն հերթական շրջիկ կարգով։

36 Ընդհանուր ժողովն կանոնաւոր է համարւում երբ ներկայ են բոլոր անդամակցողները և կամ 3/4 ը—մեծամասնութիւնը։

37 Հրաւիրատեղերին ստորագրող անդամը պարտաւոր է օրօք առաջ նախ քան ժողովի գումարումն յայտնել իւր բացակայութեան յարգելի պատճառները. յօդ. 30. 34.

38 Կարևորութիւն զգացած ժամանակում ժողովի համաձայնութիւնով և կամ նախագահի հրաւիրմամբ կարող են ձեռնահաս խորհրդատու անձինք ներկայ լինել, նոյնպէս և պատուաւոր կոչուած անձնաւորութիւնը։

39 Անդամների ընդհանուր կազմը, գաղանի քուէարկութեամբ ընտրում է իւր հասու անդամակցող ընկերներից նախագահ, փոխ-նախագահ և քարտուղար։

40 Վարչութեան նախագահը իրաւատէր է մի տարէն ժամանակի. անդամակցող ընկերները գտնւում են նրա անմիջական իրաւանց ներքոյ, ունի իրաւունք քննելու նրանց գործունէութիւնը, հսկելու նրանց բարոյական պարտաւորութիւնների ճիշտ կատարման. ժողովրդի հետ ընդհարում պատահած դէպքում, կարգադրել

հասու խղճմտաւոր անդամակցող քահանանե-
րից մասնաժողով. իսկապէս ճշմարտութիւնը
թիւրիմացութիւններից բաժանելու, բռնկուած
կրքերի բորբոքումները խաղաղարար ելքով վեր-
ջաւորելու, յուզմունքները հնարաւորութեան
չափով դադարեցնելու, համերաշխութեան ոգին
արդարամտութեամբ վերականգնելու առանց
դիմակաւորուած կողմնապահութեան. համ. 1.
յօդ. ա. բ. գ. է. թ. ժ. որոշմանց.

41 Խաղաղարար մասնաժողով կարգել ժողովրդոց
մէջ պատահած վէճերին, դժգոհութիւններին
հնարաւորութեան չափով վերացնելու, խաղա-
ղութիւն տարածելու.

42 Ընդհանուր ժողովը տնօրինող է կազմութեան
բոլոր գործերին վերաբերեալ. նրա զբաղմունք-
ները լինելու են հետևեալ պարտականութիւն
ունեցող խնդիրների առնչութիւնները.

ա. Վարչութեան ներկայացրած տարեկան հաշիւների
լիակատար քննութիւնը.

բ. Վարչութեան անդամների և նրանց գործունէու-
թեան եղանակը, վերատուդող մասնաժողովի
ընտրութիւնը.

գ. Անդամների կամ Վարչութեան մէջ ծագած բո-
ղոքները, տարաձայնութիւնները, թիւրիմացու-
թիւնները, յարաբերութիւնների լարուելը. ընկ-
երական վերաբերութեան խախտումները, պար-
տաճանաչութիւնից դուրս գալը, կանոնադրու-
թեան զանց առնող ընկերներին հեռացնելն,
իրաւազուրկ առնելը, տուգանքի ենթարկելն.
1, 3, 17, 22, 23, 28, 30, 33, 34.

դ. Անդամների տուած տեղեկութիւնների քննու-
թիւնը.

ե. Կանոնադրութեան փոփոխութիւնը և կամ քըն-
նութեան ենթարկելն։

զ. Միութեան դադարեցնելու խնդրի քննութիւնը։

Ե.

Վարչութիւն.

43 Ընդհանուր ժողովի գործադիր կազմը Վարչու-
թիւնն է, որը և պատասխանատու է ընդհա-
նուր ժողովի անդամակցողների առաջ իւր գոր-
ծելակերպով.

44 Վարչութեան անդամ ընտրում է ընդհանուր
ժողովը իւր անդամներից գաղտնի քուէարկու-
թիւնով մի տարէն ժամանակի. յօդ. 39.

45 Վարչութեան ընտրուած անդամները պարտակա-
նութիւն ունին ընդհանուր ժողովի որոշում-
ները լրիւ կատարելու, գրագրութեան և հա-
շուապահութեան անթերի վարելը, դրամարկղի
կանոնաւորութեան վերայ հսկելը, զեկուցում-
ների տուած յայտարարութիւնների պարտանա-
կութիւնները կատարելը, ընկերական միութեան
միջոցների լայն արդիւնաւոր աղբիւրների գըտ-
նելն, նուիրաբերուած եկամուտների տոկոսների
օրինակատարութիւնների ճիշտ հաշուէտուու-
թիւնը, մատեանների պաշտօնական գրութիւն-
ների պատասխանատուութիւնը։

46 Վարչութեան գործադիր մարմնի անհրաժեշտ
պարտաւորութիւնն է տարեվերջին ընդհանուր
ժողովին հաշիւ ներկայացնել առանց յետա-
ձգելու։

47 Ամսավճարները և բոլոր եկամուտները գանձւում
է ամսէ ամիս Վարչութեան գանձապահի մօտ.
և նոյն ընդհանուր ժողովին տրւում է մանրա-
մասնօրէն հաշիւ. զանցառուների հետ վարւում է
նախատեսուած 17, 18, 23, 28, 40, 42 յօդ։

48 Քահանայական Միութեան ունենալու է կնիք, մէջը
խաչ ողկոյզով պատած. շրջանակի վերայ փո-
րագրուած «Կոտէից գաւառի Հայ Քահանայից
Միութիւն»։

29489-63

Զ.

Վերստուգող մասնաժողով.

49 Ընդհանուր ժողովի հաճ հաւանութեամբ գաղտնի քուէարկութիւնով տարէն երկու անգամ ընտրւում է Վերստուգող մասնաժողով և այն՝ կազմուած երեք անձնաւորութիւններից, որոց պարտականութիւնն է Վարչութեան բոլոր ունեցած ու վարած գործերի անաչառ քննութիւնը։

50 Վերստուգող մասնաժողովի անդամները, Վարչութեան անդամներից չեն կարող լինել, այլ՝ անդամ ընկերներից, որոնք ոչ մի վարչական գործ յանձն առած չեն տարուայ ընթացքում.

51 Ժողովի անդամները իրաւունք ունին անկախ մասնաժողով կազմելու առանձնապէս քննելու իրենց առօրեայ ընկերական շրջանի վերաբերող ընկերոջ թերութիւնները, խելահաս դարմանի միջոցների դիմելու և իրենց կազմած արձանագրութիւնը ներկայացնել ընդհանուր ժողովին ի քննութիւն։

52 Մասնաժողովը, միւս խորհրդակցական ընկերութեան անդամները իրաւունք ունին բողոք ներկայացնել Վարչութեան անդամների վերայ ընդհանուր ժողովին, նախօրօք ժամանակաւոր գործադիր մարմին ընտրելով, ճշտիւ քննելու նրանց ունեցած թերութիւնները։

Է.

Դադարումն Միութեան.

53 Միութիւնը դադարեցնելու որոշեալ ժամանակամիջոցում անհրաժեշտ է ժողովի մեծամասնութիւնը $^3/_4$.

54 Եթէ Միութիւնը փակէ ընկերական դրամարկղի գոյութեան շարունակութիւնը որ և է պատճառով՝ իւր սեպհականութիւնը տնօրինում է ընդհանուր ժողովի կամքի համաձայն։

55 Այս Կանոնադրութիւնը հաստատում է Ամենայն Հայոց Վեհափառ Քահանայապետը և ապա մտնում է հիմնական-օրինական գործադրութեան մէջ։

Գրադարան Библиотека ՀՍՍՌ ՊՊ ՀՍՍՌ Մ. Մասիսյանի անվան գրադարան



2774

ՀՀ Ազգային գրադարան
NL0029807

2692